Աշխատանքի ծածկագիր 4318

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան

25.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Գ.Հարությունյանի
մասնակցությամբ անդամներ՝
Տ.Մարկոսյանի
Լ.Գրիգորյանի

Քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հավակնորդը խնդրել է սահմանված կարգով վերանայել որակավոր գրավոր քննության արդյունքում ստացված միավորները և դրանք բարձրացնել՝ չներկայացնելով բողոքարկման հիմքերը և հիմնավորումները:

Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԲԴԽ-73-Ո-175 որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի 29-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը գրավոր աշխատանքը վերստուգում է միայն բողոքարկման դիմումի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105.1-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

4318 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքն ամբողջությամբ մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **Տ.ՄԱՐԿՈՍՅԱՆ**

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ